

---

**ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՀ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ  
ՄԵՐՕՐՅԱ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ**

**ԱԼԵՆ ՂԵՎՈՆՂՅԱՆ**

Ժամանակակից աշխարհում միջազգային անվտանգությունը դարձել է բարդ ու բազմաբաղադրիչ համակարգ, որտեղ պետություններն իրենց անվտանգությունն ապահովում են ինչպես անհատական, այնպես էլ դաշինքային-կոալիցիոն ձևաչափերում:

Հայաստանը որպես պետականության կարճաժամկետ փորձ ու անվտանգության լրջագույն մարտահրավերներ ունեցող երկիր, իր ներուժը հնարավորինս օգտագործելով, անհատական ու հավաքական դաշինքային ձևաչափերում ամենատարբեր քայլեր է ձեռնարկում՝ համակողմանիորեն ապահովելու իր անվտանգությունն ու կայունությունը: Այս համատեքստում իր առանցքային դերն ու նշանակությունն ունի ՀՀ դաշինքային քաղաքականությունը, որի ամենից տեսանելի դրսևորումը Հայաստանի անդամակցությունն է Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը (ՀԱՊԿ):

Իրավաքաղաքական առումով ՀԱՊԿ-ի հիմքը 1992 թ. մայիսի 15-ին Տաշքենդում ստորագրված Հավաքական անվտանգության պայմանագիրն է<sup>1</sup>: 2002-ից այն ինստիտուցիոնալ ձևակերպում ստացավ ՄԱԿ-ի Քարտուղարությունում՝ որպես հավաքական «ինքնապաշտպանության» ու «անվտանգության» սկզբունքների վրա հիմնված ռազմաքաղաքական դաշինք: Ներկայումս ՀԱՊԿ անդամ երկրներ են ՌԴ-ն, Բելառուսը, ՀՀ-ն, Ղազախստանը, Տաջիկստան և Ղրղզստանը:

Հայեցակարգային առումով ՀԱՊԿ-ի գործունեությունն ածանցվում է «հավաքական ինքնապաշտպանության» սկզբունքից, համաձայն որի՝ դաշինքի անդամ երկրներից յուրաքանչյուրի նկատմամբ ագրեսիայի ցանկացած դրսևորում (այդ թվում՝ ռազմական) դիտարկվում է որպես հարձակում ողջ դաշինքի վրա, հետևաբար դաշնակիցները պարտավորվում են հնարավոր բոլոր, այդ թվում ռազմական միջոցների ներգրավմամբ համատեղ քայլեր ձեռնարկել՝ հակադարձելու ընդհանուր սպառնալիքին: Այս սկզբունքը արտացոլված է դաշինքի

---

<sup>1</sup> Պայմանագիրը առաջինը ստորագրել են Հայաստանը (15 մայիսի 1992 թ.), Ղազախստանը, Ղրղզստանը, Ռուսաստանի Դաշնությունը, Տաջիկստանը, Ուզբեկստանը (մինչև 2 ապրիլի, 1999 թ. և 16 օգոստոսի, 2006 թ.), այնուհետև Ադրբեջանը (24 սեպտեմբերի, 1993 թ. մինչև 1999 թ.), Բելառուսը (31 դեկտեմբերի, 1993 թ.), Վրաստանը (9 սեպտեմբերի, 1993 թ. մինչև 1999 թ.):

հիմնարար փաստաթղթերում՝ պայմանագրում և հայեցակարգում, որոնք նաև նախանշում են դաշինքի ու նրա անդամների քաղաքական վարքը միջնաժամկետ կամ երկարաժամկետ հեռանկարում, որոշակիացնում են ՀԱՊԿ նպատակներն ու խնդիրները, զարգացման տեսլականը:

Ինչպես ընդունված է միջազգային պայմանագրերի պրակտիկայում, ՀԱՊԿ-ի հիմնարար պայմանագրի դեպքում ևս նրա բովանդակությունը (այդ թվում՝ համատեղ միջոցառումների բնույթն ու ծավալը) որոշվում է դաշինքի անդամ երկրների միջև դիրքորոշումների համաձայնեցման ու ամբողջացման միջոցով: 11 հոդվածները վերախմբագրվել են 2010-ին: «Հավաքական անվտանգության պայմանագիրը» ստորագրած երկրները պարտավորվում են միմյանց դեմ գործողություններ չծավալել, համաձայնեցնել անվտանգության, արտաքին քաղաքականության ոլորտներում իրենց դիրքորոշումները, ստեղծել ընդհանուր մոտեցումները համակարգող մարմիններ, իրականացնել ընդհանուր մարտահրավերներին ու սպառնալիքներին հակադարձելու միացյալ գործողություններ:

Այս համատեքստում կարևոր է առանձնացնել կազմակերպության հիմնարար պայմանագրի այն առանցքային դրույթները, որոնք արտացոլում են ՀԱՊԿ-ի որդեգրած հավաքական ինքնապաշտպանության ու անվտանգության հիմնարար սկզբունքները, այն է՝ անդամ երկրները պարտավորվում են.

1) «...խորհրդակցել միմյանց հետ միջազգային անվտանգության կարևոր այն հարցերի շուրջ, որոնք կապված են իրենց շահերի հետ համաձայնեցնելով դրանց վերաբերյալ առկա մոտեցումները: Կազմակերպության անդամ երկրների անվտանգությանը, տարածքային ամբողջականությանը, ինքնիշխանությանն ուղղված սպառնալիքների ի հայտ գալուն պես անհապաղ գործարկել համատեղ խորհրդակցությունների մեխանիզմները առկա դիրքորոշումները համաձայնեցնելու, առաջացած սպառնալիքի վերացմանն ուղղված միջոցներ ձեռնարկելու նպատակով»<sup>2</sup>:

2) «Եթե անդամ երկրներից որևէ մեկն այլ պետության կամ պետությունների խմբի կողմից ենթարկվում է ագրեսիայի, ապա դա կազմակերպության անդամ մյուս բոլոր երկրների կողմից դիտվում է որպես ագրեսիա բոլորի դեմ: Կազմակերպության որևէ անդամի՝ ագրեսիայի ենթարկվելու պարագայում դրան ենթարկվածը, ի կատարումն Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության «հավաքական ինքնապաշտպանության մասին» 51-րդ հոդվածի, կարող է, այդ թվում, նաև ռազմական օգնություն ստանալ գործընկերներից, եթե նման խնդրանքով դիմի վերջիններիս»<sup>3</sup>:

Թեև հավաքական անվտանգության պայմանագրի երկրորդ և չոր-

<sup>2</sup> «Договор о коллективной безопасности», 15.05.1992, [http://www.odkb-csto.org/documents/detail.php?ELEMENT\\_ID=126](http://www.odkb-csto.org/documents/detail.php?ELEMENT_ID=126)

<sup>3</sup> Նույն տեղում:

րորդ հողվածներն ինչպես բովանդակությամբ, այնպես էլ հասկացութա-  
լին կառուցակազմով նման են 1949 թ. Վաշինգտոնում կնքված Հյուսիս-  
ատլանտյան դաշինքի կազմակերպության հիմնարար փաստաթղթի չոր-  
րորդ ու հինգերորդ հողվածներին<sup>4</sup>, սակայն, ի տարբերություն ՆԱՏՕ-ի,  
ՀԱՊԿ-ի անդամ երկրների հավաքական ինքնապաշտպանության հա-  
մակարգի, իրավականորեն պարտավորեցնող գործառույթները գործի են  
դրվում միայն այն դեպքում, եթե կազմակերպության անդամ ագրեսիայի  
ենթարկված պետությունը օգնության ու օժանդակության խնդրանքով  
պաշտոնապես դիմում է դաշինքի մյուս անդամներին:

Այս հանգամանքը քաղաքական առումով որոշակի ռիսկեր կարող  
է պարունակել՝ գործնականում կաթվածահար անելով կազմակեր-  
պության՝ որպես հավաքական անվտանգության ապահովման մարմ-  
նի արդյունավետությունը: Մյուս կողմից՝ սա յուրահատուկ ճկուն մե-  
խանիզմ է. կազմակերպության որոշ անդամներ առանձին դեպքերում  
կարող են չկատարել կազմակերպության շրջանակներում իրենց դաշ-  
նակից համարվող անդամ երկրի նկատմամբ ստանձնած պարտավո-  
րությունները:

Այսպիսով, ՀԱՊԿ-ն հայեցակարգային և հոչակագրային առումով  
հավաքական ինքնապաշտպանության ֆորմալ դասական համակարգ է,  
որն առաջնորդվում է հավաքական անվտանգության սկզբունքով: Քա-  
ղաքական առումով այն ընդհանուր խորհրդային անցյալ ու անվտան-  
գության մարտահրավերներ ունեցող երկրների միություն է, որը դեռ  
պետք է անցնի ինստիտուցիոնալ կայացման երկար ճանապարհ: Այս  
տեսանկյունից ՀԱՊԿ-ի կայացման ամենից կարևոր ցուցիչը նրա քաղա-  
քական դերի ու անդամ երկրների համար անվտանգության ընդհանուր  
ընկալումների ձևավորումն է, հավաքական շահերի մշակումն ու իրա-  
ցումը, որը, սակայն, կազմակերպության գործունեության ներկա փու-  
լում հանդիպում է մի շարք մարտահրավերների: Վերջինների թվում կա-  
րող ենք առանձնացնել կազմակերպության անդամների ազգային շահե-  
րի՝ միմյանցից օբյեկտիվորեն տարբերվող բաղադրիչները, վտանգների  
ու սպառնալիքների ընդհանուր ընկալումների տարբերությունները, հա-  
վաքական միջոցներով դրանց արձագանքելու ոչ միշտ առկա պատրաս-  
տակամությունը, կանոնադրությամբ պարտադիր իրացման նորմ հան-  
դիսացող փոխադարձ աջակցության ու օժանդակության գործողություն-  
ների նկատմամբ անդամների տարբերվող մոտեցումները, երրորդ երկր-  
ների հետ հարաբերություններում անդամ երկրների՝ միմյանցից տար-  
բերվող շահերն ու քաղաքականությունը, արտաքին հարթակներում ոչ  
պատշաճ համագործակցության բացակայությունը և այլն:

Այս առումով ՀԱՊԿ կայացման ներկա փուլում առկա մարտա-  
հրավերների բնույթի և դրսևորումների վերաբերյալ առավել հստակ ու  
հասցեական պատկերացում կազմելու համար հարկավոր է վերոշա-

---

<sup>4</sup> Տե՛ս «The North Atlantic Treaty», Washington D.C. - 4 April 1949, [https://www.nato.int/cps/ic/natohq/official\\_texts\\_17120.htm](https://www.nato.int/cps/ic/natohq/official_texts_17120.htm)

քաղաքացիական մի շարք ցուցիչների հիմքով վերլուծել կազմակերպության անդամ երկրների մոտեցումները՝ տեղայնացնելով դրանք ՀՀ անվտանգության ապահովման ներկա իրողությունների ու հեռանկարի վրա:

ՀԱՊԿ-ի քաղաքական դերակատարման արդի կարևորագույն մարտահրավերներից մեկը նրա անդամների ազգային շահերի ու դրանց վերաբերյալ պատկերացումների երբեմն տարբերվող մոտեցումներն են: Լինելով պետական անվտանգության ու զարգացման ելակետային ընկալումների ու նպատակների հավասարակշռված ամբողջություն՝ ազգային շահերն առաջին հերթին պետության անվտանգության, զարգացման ու հեռանկարի ուղենիշներ են, որ ուրվագծում են նրա քաղաքականության հիմքերը, բնույթը, շեշտադրումները, դինամիկան:

ՀԱՊԿ անդամ երկրների ազգային շահերի համատեղելիության վերաբերյալ պատկերացում կազմելու համար, բացի հռչակագրային ու հայեցակարգային բաղադրատարրերից, այդ շահերն առաջին հերթին պետք է վերլուծել մի շարք այլ քաղաքական, տնտեսական, ռազմական, քաղաքակրթական և այլ ցուցիչների հիմքով: Շահերի համատեղելիության վերաբերյալ մոտեցումներն էլ լավելի իրատեսական ու առարկայական կլինեն, եթե այդ համատեքստում դիտարկվեն ու համեմատվեն ՀՀ-ի ու ՀԱՊԿ-ում նրա դաշնակիցների և ՀՀ-ի համար հակառակորդ պետություն Ադրբեյջանի ու ՀԱՊԿ մյուս երկրների շփումները, ապրանքաշրջանառությունը, քաղաքական օրակարգը և այլն:

Երկրներ *	2014 թ.		2015 թ.		2016 թ.	
	Հայաստան	Ադրբեյջան	Հայաստան	Ադրբեյջան	Հայաստան	Ադրբեյջան
ՌԴ	1,4մլրդ	4,0մլրդ	1,1մլրդ	2,8մլրդ	1,3մլրդ <sup>5</sup>	1,9մլրդ <sup>6</sup>
Ղազախստան	7,5մլն	250,8մլն <sup>7</sup>	4,5մլն	125մլն <sup>8</sup>	6,6մլն <sup>9</sup>	136,8մլն <sup>10</sup>
Բելառուս	40,06մլն	326,7մլն	32,4մլն	290,6մլն	37,5 մլն <sup>11</sup>	175,3 մլն <sup>12</sup>

\* Երկրների միջև ապրանքաշրջանառության թվերը ներկայացված են ԱՄՆ դոլարով:

<sup>5</sup> Տե՛ս ՀՀ. Ապրանքների արտահանում և ներմուծում, [http://www.armstat.am/file/article/sv\\_12\\_16a\\_411.pdf](http://www.armstat.am/file/article/sv_12_16a_411.pdf)

<sup>6</sup> Տե՛ս «Внешняя торговля России на основе данных Федеральной таможенной службы России», 28 февраля 2017 г. <http://russian-trade.com/reports-and-reviews/2017-02/torgovlyamezhdu-rossiey-i-azerbayd-zhanom-v-2016-g/>

<sup>7</sup> Տե՛ս «Товарооборот между Казахстаном и Азербайджаном в 2014 году составил более 250 млн долларов», <https://www.zakon.kz/4682629-tovarooborot-mezhdu-kazakhstanom-i.html>

<sup>8</sup> Տե՛ս «Казахстан и его соседи: возможности и ограничения» Институт мировой экономики и политики при Фонде Первого Президента Республики Казахстан, [http://iwep.kz/files/attachments/article/2016-04-25/kazakhstan\\_i\\_ego\\_sosedi\\_vozmozhnosti\\_i\\_ogranicheniya.pdf](http://iwep.kz/files/attachments/article/2016-04-25/kazakhstan_i_ego_sosedi_vozmozhnosti_i_ogranicheniya.pdf)

<sup>9</sup> Տե՛ս ՀՀ. Ապրանքների արտահանում և ներմուծում, [http://www.armstat.am/file/article/sv\\_12\\_16a\\_411.pdf](http://www.armstat.am/file/article/sv_12_16a_411.pdf)

<sup>10</sup> Տե՛ս Взаимная торговля Казахстана с Азербайджаном, <http://export.gov.kz/public/files/analytics/country%20Review/references/2016/Азербайджан%202016.pdf>

<sup>11</sup> Տե՛ս ՀՀ. Ապրանքների արտահանում և ներմուծում, [http://www.armstat.am/file/article/sv\\_12\\_14a\\_411.pdf](http://www.armstat.am/file/article/sv_12_14a_411.pdf)

<sup>12</sup> Տե՛ս Посольство Республики Беларусь в Азербайджанской Республике, Торгово-экономические отношения, [http://azerbaijan.mfa.gov.by/ru/bilateral\\_relations/trade\\_economic/](http://azerbaijan.mfa.gov.by/ru/bilateral_relations/trade_economic/)

Ներկայացված վիճակագրական տվյալներից պարզ է, որ ինչպես Բելառուսի, Ղազախստանի, այնպես էլ ՌԴ-ի հետ Ադրբեջանի ապրանքաշրջանառությունը ՀՀ-ի համեմատությամբ երբեմն բազմապատիկ ավելի է: Այսինքն՝ թեպետ ներկայումս ՀԱՊԿ երկրները գործակցում են ՀՀ-ի հետ, սակայն Ադրբեջանի որպես արտաքին տնտեսական գործընկերոջ դերն ու նշանակությունը շոշափելիորեն մեծ են երբեմն բնորոշվելով որպես ռազմավարական: Քաղաքական իմաստով սա նշանակում է, որ վերջին տարիներին, ինչպես միջազգային տնտեսական օբյեկտիվ միտումներով, այնպես էլ սուբյեկտիվ գործոններով պայմանավորված, տնտեսական անկում արձանագրած ՀԱՊԿ որոշ երկրներ հայ-ադրբեջանական հակադրության պայմաններում դժվար ընտրության վիճակում են հայտնվում. այստեղ կշեռքի նժարներից մեկին դրված են նրանց իրավաքաղաքական պարտավորությունները ՀԱՊԿ ձևաչափում, մյուսին՝ տնտեսական կարևոր գործընկերոջ հետ շփումները կորցնելու հնարավոր հետանկարը:

ՀԱՊԿ-ի՝ որպես հավաքական անվտանգության համակարգի ազգային շահերի ընդհանրացման աստիճանի գնահատման հաջորդ կարևոր ցուցիչը անդամ երկրների ռազմատեխնիկական գործակցությունն է ինչպես կազմակերպության, այնպես էլ այլ պետությունների հետ: Այս առումով պատկերը բավական հետաքրքիր է:

Ցանկացած պետության, այդ թվում նաև ՀՀ-ի ազգային շահերի կարևորագույն տարրը ռազմաքաղաքական բաղադրիչն է, որը սովորաբար առավել արդյունավետ է ապահովվում ու սպասարկվում, եթե պետությունը անդամակցում է հավաքական անվտանգության որևէ համակարգի, դաշինքի: Տեսականորեն հավաքական անվտանգության համակարգերը պետությունների կողմից ստեղծվել են, որպեսզի պետական անվտանգության, հատկապես ռազմական անվտանգության խնդիրներին ու սպառնալիքներին միացյալ, առավել արդյունավետ ու պակաս ծախսատար լուծումներ տան, արձագանքեն սպառնալիքներին՝ նվազեցնելով արտակարգ կամ ռազմական իրավիճակներում կորուստների քանակը: ՀԱՊԿ-ի շրջանակներում ՀՀ-ի ռազմական անվտանգության խնդիրների լուծման առումով պաշտոնական Երևանը հնարավորություն ունի հավաքական, ինչպես նաև ՀԱՊԿ անդամ որևէ երկրի հետ (մեր դեպքում՝ հատկապես ՌԴ-ի) անհատական գործակցության միջոցով իրականացնելու ցամաքային և օդային սահմանների համատեղ պաշտպանություն: Մյուս կողմից՝ ՀԱՊԿ-ն իր անդամներին հնարավորություն է ընձեռում ակտիվ գործակցելու ռազմական ոլորտում՝ առավել հարմար պայմաններով զենք ու զինտեխնիկա ձեռք բերել, վերանորոգել ու արդիականացնել այն (հիմնականում ՌԴ-ում, երբեմն էլ Բելառուսում), տարաբնույթ թիրախայնության ու տարբեր ներգրավվածությամբ գորավարժություններ անցկացնել, գործընկերա-

յին ու դաշնակցային պայմաններով ռազմական կրթություն ստանալ ռազմական բուհերում, ճգնաժամային կառավարման հավաքական միջոցառումներ իրականացնել, գործակցել ՀՕՊ-ի ուղորտում, ռազմական սրացումների ժամանակ դրանք հարթել արագ արձագանքման օպերատիվ ուժերի ներգրավմամբ, ռազմական կարևորության տեղեկություններ փոխանակել և այլն:

ՀՀ-ի համար ՀԱՊԿ-ի ձևաչափում առավել առարկայական է հայրուսական ռազմական համագործակցությունը, որի շրջանակներում կողմերը արդեն երկու տասնամյակ միացյալ ջանքերով ապահովում են ՀՀ-ի և ՌԴ-ի ռազմական անվտանգության կովկասյան ուղղությունը: Դրա վկայությունն են ՌԴ ԶՈՒ-ի 102-րդ ռազմաբազան<sup>13</sup> և հայրուսական միացյալ գորախումբը, որի վերաբերյալ համաձայնագիրը վավերացվել է 2017 թ. հունիսին՝ ՌԴ-ի Պետական Դումայի և 2017թ. հոկտեմբերին՝ ՀՀ ԱԺ-ի կողմից:

Կազմակերպության ձևաչափում գործակցության հաջորդ կարևոր բաղադրիչը ՌԴ-Բելառուս միացյալ ՀՕՊ համակարգին ՀՀ-ի միանալն էր, ինչպես նաև ՀՀ-ի՝ ՌԴ-ի ներքին շուկայական գներով զենք ու զինտեխնիկա գնելու հնարավորությունը<sup>14</sup>, տարածաշրջանային տարբեր սցենարներով համատեղ գորավարժությունները և այլն:

Ռազմական գործակցության ցուցիչի հիմքով Ադրբեջանի ու ՀԱՊԿ-ի անդամ երկրների շփումների պատկերը ևս ուշագրավ է: Դա մասնավորապես վերաբերում է կողմերի միջև ռազմատեխնիկական համագործակցությանն ու զենքին: ՀԱՊԿ շրջանակներում ՀՀ դաշնակից համարվող երկու երկիր՝ ՌԴ-ն և Բելառուսը, Ադրբեջանի հետ ակտիվ գործակցում են: Օրինակ՝ «Զենքի վաճառքի միջազգային կենտրոն»-ի տվյալներով՝ 2009-2016 թթ. ընթացքում Ադրբեջանն ընդհանուր

<sup>13</sup> 2011 թ. ռազմաբազայի մասին պայմանագիրը վերանայվեց, և ռուսական զորքերի՝ ՀՀ-ում մնալու ժամկետը երկարաձգվեց մինչև 2044 թ.: 102-րդ ռուսական ռազմաբազայում, ըստ տարբեր տվյալների, իրենց ծառայությունն են անցնում 3300-5000 զինծառայող (առավել մանրամասն տե՛ս «The Military Balance 2014. London: The International Institute for Strategic Studies», 2014, էջ 171, ինչպես նաև՝ «102-я военная база Группы российских войск в Закавказье», <http://www.kavkaz-uzel.ru/articles/152315/>):

Ռազմաբազայում առկա է ինչպես հարձակողական, այնպես էլ պաշտպանողական զինտեխնիկայի պատշաճ քանակ (առավել մանրամասն տե՛ս «Группа Российских Войск в Закавказье (ГРВЗ) (Азербайджан, Армения, Грузия)», <http://www.waronline.org/write/world-military/russian-military-abroad/transcaucasia/>):

<sup>14</sup> 2015 թ. ՀՀ-ն ՌԴ-ի հետ ստորագրել է միջպետական վարկի (200 մլն դոլար) համաձայնագիր, որով ՀՀ-ն ՌԴ-ից պետք է ձեռք բերեր զինտեխնիկայի խմբաքանակ, որի մեջ մտնում են «ՏՈՍ-1Ա» ծանր հրանետային համակարգեր, «Սմերչ» համազարկային կրակի ռեակտիվ համակարգեր, «Ավտորազա-Ս» ռադիոտեխնիկական հետախուզության վերգետնյա կայաններ, «9Մ113Ս» հակատանկային կառավարվող հրթիռներ և այլն: Հավելենք, որ 2015-16 թթ. ընթացքում ՀՀ-ն ՌԴ-ից ձեռք է բերել «Իսկանդեր-Է» օպերատիվ մարտավարական ԶՀՀ-եր, որի հեռահարության շեմը կազմում է 280 կմ (առավել մանրամասն տե՛ս «Искандеры» навели на Баку», <https://www.gazeta.ru/army/2017/02/22/10539515.shtml>): 2017 թ. ՀՀ կառավարությունը և Աժ հաստատեցին ՌԴ-ից 100 մլն դոլարի ռազմական տեխնիկա գնելու նպատակով նոր վարկ վերցնելու օրինագիծը:

առմամբ ՌԴ-ից 4,07 մլրդ<sup>15</sup>, իսկ Բելառուսից 611,2 մլն<sup>16</sup> դոլարի զենք ու զինամթերք է<sup>17</sup> ձեռք բերել: Զինտեխնիկայի նշյալ խմբաքանակի մեջ մտնում են ինչպես հարձակողական, այնպես էլ պաշտպանական միջոցներ: Ղազախստանի պարագայում իրավիճակը քիչ այլ է. Աստանան Ադրբեջանին հիմնականում զենք չի վաճառում, սակայն երբեմն որոշ գործարքների «միջնորդ» է դառնում. 2008 թ. Բաքուն նրանից գնել է իսրայելական արտադրության՝ 122, 160 և 300 մմ տրամաչափի «ԼԻՆԲՄ» համազարկային համակարգեր<sup>18</sup>:

Տրամաքանական է, որ նման գործակցությունն անհանգստացնող և մտահոգիչ է: Այդ մասին պաշտոնական Երևանը մեկ անգամ չէ, որ բարձրաձայնել է նաև՝ երկրի բարձրագույն ղեկավարության մակարդակով: Մասնավորապես՝ 2014-ի հուլիսին արգենտինական «La Nacion»-ի պարբերականին տված հարցազրույցում ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը հայտարարեց, որ ժողովուրդը շատ մտահոգված է այն փաստով, որ Հայաստանի ռազմավարական դաշնակիցը զենք է վաճառում Ադրբեջանին: «Սակայն ես վստահ եմ, որ Հայաստանի ուժերն ու կարողությունները բավարար են սեփական սահմանները պաշտպանելու համար: Չնայած որ Ռուսաստանը զենք է վաճառում Բաքվին, ես չեմ կասկածում, որ դժվար պահին Ռուսաստանը կկատարի իր ստանձնած պարտավորությունները»<sup>19</sup>, - ասել է նա: 2015 թ. մարտին նույն հարցադրման շուրջ Ս. Սարգսյանը հայտարարեց, որ գլխավոր խնդիրն այն է, որ «հայ զինվորը հասկանում է՝ իրեն ուզում են սպանել ռուսական զենքից... այդ հարցը պետք է լուծել»<sup>20</sup>:

2015 թ. սեպտեմբերին BBC-ին տված հարցազրույցում ՀՀ ԱԳ նա-

---

<sup>15</sup> ՌԴ-ից ծանր սպառազինության խոշոր խմբաքանակների առաքումը Ադրբեջան սկսվել է 2006-2007 թթ.՝ «S-72» տանկի 62 միավոր խմբաքանակով: Հաջորդ խոշոր պայմանագիրը նախատեսում էր «Ֆավորիտ» Մ-300 ՁՀՀ-ների 2 դիվիզիոնի վաճառքն Ադրբեջանին 300 մլն դոլարով: Ընդհանուր առմամբ 2006 թ., վերոնշյալ տանկերից ու ՁՀՀ-ներից բացի, ՌԴ-ն Ադրբեջանին է վաճառել 94 միավոր «S-90» տանկ, 91 «ՀՄՄ-3» գրահավոխադրիչ, 24 «ԲՏՌ-80», 18 2Մ19 Սատա-Մ, 18 միավոր «Սմերչ» համազարկային կրակի ռեակտիվ համակարգ, 18 միավոր «Սոլնցեայոկ» ծանր հրանետային համակարգ, 24 միավոր «Մի-24» գրոհային ուղղաթիռ, ավելի քան 60 միավոր «Մի-17» ուղղաթիռ և այլն (առավել մանրամասն տե՛ս ԲԱՄՏՕ / Центр анализа мировой торговли оружием, <http://www.armstrade.org>):

<sup>16</sup> 2005-2006 թթ. Բելառուսը Ադրբեջանին է վաճառվել 60 հատ «S-72» տանկ, ևս 62-ը՝ 2012-ին: 2008-09 թթ. առաքվել է 12 միավոր 203 մմ-անոց 2Մ7 «Պիոն» հրանոթ, 2010-ին՝ 30 միավոր 122 մմ «Դ-30» հատրից, 2009-2012 թթ.՝ «Սու-25» 6 կործանիչ: Բելառուսի ձեռնարկությունները նաև արդիականացրել են ադրբեջանական «Բուկ» Մ1, «Օսա» և «Պեչորա» տիպի զենիթահրթիռային համակարգերը (առավել մանրամասն տե՛ս ԲԱՄՏՕ / Центр анализа мировой торговли оружием, <http://www.armstrade.org>):

<sup>17</sup> Տե՛ս ԲԱՄՏՕ / Центр анализа мировой торговли оружием, <http://www.armstrade.org>

<sup>18</sup> Տե՛ս «Թե ինչպես ադրբեջանցիները գնեցին Ղազախստանի արտադրության իսրայելական զենքեր», <https://razm.info/1936>

<sup>19</sup> «Ինչպես են Հայաստանի ՀԱՊԿ դաշնակիցները զինում Ադրբեջանին», <http://www.panarmenian.net/arm/details/199693/>

<sup>20</sup> Նույն տեղում:

խարար Է. Նալբանդյանը «բնական» անվանեց այն փաստը, որ ՌԴ-ն զենք է վաճառում Ադրբեջանին: «Անշուշտ, չեմ կարող ասել, թե մեզ դուր է գալիս այն փաստը, որ Ադրբեջանը զենք է գնում ՌԴ-ից, սակայն, հավանաբար, դա բիզնեսի, առևտրի հարց է»<sup>21</sup>:

Այս համատեքստում հարկ է նաև անդրադառնալ Ադրբեջանին զինտեխնիկա վաճառելու հարցադրման վերաբերյալ ՌԴ-ի տարբեր պետական պաշտոնյաների մոտեցումներ-հիմնավորումներին. օրինակ՝ ՌԴ ներկայիս վարչապետ Դ. Մեդվեդևը 2016թ. ապրիլի դեպքերից անմիջապես հետո PTP հեռուստաալիքին տված իր հարցազրույցում նշեց. «Եթե ՌԴ-ն հրաժարվի (Ադրբեջանին – Ա. Ղ.) զենք վաճառելուց, ապա այդ տեղը կգրադեցնեն այլ երկրներ, և վաճառված զինտեխնիկայի մահաբերության աստիճանը առավել պակաս չի լինի: Այդ հանգամանքը կարող է խախտել ուժային հարաբերակցությունը, որն առկա է, այն առումով, որ մենք հասկանում ենք մեր գործընկերների պահանջները և պատկերացնում ենք առկա ուժային հարաբերակցությունը»<sup>22</sup>: Ի պատասխան նման մոտեցումների, ՀՀ Աժ պատգամավոր Կ. Բեքարյանն իր ռուս գործընկերների հետ հեռուստասաուլիսի ժամանակ ընդգծեց. «Փաստարկը, որ եթե Ադրբեջանը ՌԴ-ից զենք չգնի, նույն զենքը կարող է ձեռք բերել այլ երկրներից, բավարար հիմնավոր չէ, քանզի ՌԴ-ն ժամանակ առ ժամանակ Ադրբեջանին վաճառում է այնպիսի զինատեսակներ, որոնք վերջինս չի կարող ձեռք բերել որևէ այլ երկրից: Մյուս կողմից, երբ Ադրբեջանը զենք է ձեռք բերում ՌԴ-ից, ապա ներքուստ համոզվում է, որ այդ կերպ Մոսկվան «դեմ չէ» այդ զինտեխնիկան ՀՀ-ի կամ ԼՂՀ-ի դեմ կիրառելուն: Հենց այս առումով հարկավոր է աշխատել ՌԴ-ի հետ»<sup>23</sup>:

Քննարկվող հարցը դիտարկելով ֆինանսատնտեսական բաղադրիչի դիրքերից՝ նշենք, որ ՌԴ-Ադրբեջան ռազմատեխնիկական գործակցությունից Մոսկվան շոշափելի եկամուտներ է ստանում: Բավական խոսուն է միայն այն փաստը, որ օրինակ՝ 2015 թ. Ադրբեջանին «S90» տանկերի վաճառքի փաթեթը կազմել է 1 մլրդ դոլար<sup>24</sup>: Նշենք, որ ֆինանսական օգուտներ ՌԴ-ն ստանում է ոչ միայն զինտեխնիկայի վաճառքից, այլև նրա հետագա սպասարկումից, վերանորոգումից, դետալների ու մասերի վաճառքից: Տնտեսական պատժամիջոցների մեջ գտնվող ՌԴ-ի ռազմարդյունաբերական համալիրի համար սա կարևոր հանգամանք է:

---

<sup>21</sup> Նույն տեղում:

<sup>22</sup> «Медведев объяснил, почему Россия продает оружие и Армении, и Азербайджану», <https://www.pravda.ru/news/world/formerussr/09-04-2016/1297832-weapons-0/>

<sup>23</sup> «Россия продает Азербайджану оружие, которое тот ни у кого больше купить не сможет: Карен Бекарян возражает российским коллегам», <http://www.aravot.ru.am/2017/02/16/234519/>

<sup>24</sup> Տե՛ս «России удастся зарабатывать на поставках оружия и Азербайджану и Армении», <https://vz.ru/world /2016/4/8/804094.html>



Քաղաքական առումով զենք վաճառելը պետությանը, որը ռազմական հակադրության մեջ է քեզ գործընկեր երկրի հետ, փաստում է այն մասին, որ գործարքի կողմ պետությունների միջև առկա քաղաքական երկխոսությունն ունի «ռազմավարական» բնույթ<sup>25</sup>: «Ռազմավարական» եզրույթը միջպետական փոխհարաբերությունների այնպիսի որակ է և վիճակ է, երբ դրա կողմ պետությունների կարևորությունը փոխադարձ է, իսկ տնտեսական, ռազմական, մշակութային, սոցիալ-ժողովրդագրական և այլ ոլորտներում գործակցությունը՝ անփոխարինելի: Ռազմատեխնիկական ակտիվ շփումներ ունենալով Ադրբեջանի հետ՝ ՌԴ-ն երկկողմ և տարածաշրջանային ձևաչափերում նաև հնարավորություն է ստանում քաղաքական և ռազմատեխնիկական գործիքներով ազդելու Բաքվի արտաքին քաղաքական վարքի որոշ դրսևորումների վրա: Նշենք, սակայն, որ տարածաշրջանի երկրների հետ ռազմատեխնիկական գործակցության ակտիվացումը մյուս կողմից նաև անուղղակիորեն նպաստում է սպառազինությունների մրցավազքին, որը, հաշվի առնելով ՀՀ-ի ու Ադրբեջանի ռազմական բյուջեների հնարավորությունները, տարածաշրջանային ուժային հարաբերակցությունը խախտելու ռիսկեր է պարունակում<sup>26</sup>:

Եթե ռազմատեխնիկական գործակցության քննարկվող հարցը վերլուծենք միջազգային-քաղաքական համատեքստում, ապա լինելով ԼՂ հակամարտության խաղաղ կարգավորմամբ զբաղվող ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ և բազմիցս հայտարարելով<sup>27</sup>, որ ԼՂ հակամարտությունն ունի միայն խաղաղ լուծում՝ ՌԴ-Ադրբեջան ռազմատեխնիկական գործակցությունը վերջինիս կողմից կարող է դիտվել սեփական ռեանշիզմի բավարարման նպաստավոր գործոն<sup>28</sup>, նրա վարքը դարձնելով էլ ավելի անկանխատեսելի ու տարածաշրջանային կայունության ապահովման տեսանկյունից վտանգավոր:

Արձանագրենք, որ միջազգային իրավունքի տեսանկյունից ինչպես ՌԴ-ն, այնպես էլ ՀԱՊԿ անդամ երկրներից որևէ մեկը Ադրբեջանի ու ՀՀ-ի հետ ռազմատեխնիկական համագործակցության որևէ սահմա-

<sup>25</sup> Տե՛ս «МИД РФ: Азербайджан - наш важный стратегический партнер на Южном Кавказе и в Каспийском регионе», <http://www.panarmenian.net/rus/news/216611/>

<sup>26</sup> ՀՀ-ի ու Ադրբեջանի ռազմական բյուջեների հարաբերակցությունը դոլարային համարժեքով ունի հետևյալ տեսքը. 2011թ.՝ համապատասխանաբար՝ 391 մլն և 1,7 մլրդ, 2012 թ.՝ 381 մլն և 1,7 մլրդ, 2013 թ.՝ 445 մլն և 1,9 մլրդ, 2014 թ.՝ 458 մլն և 1,7 մլրդ, 2015 թ.՝ 447 մլն և 1,7 մլրդ, 2016 թ.՝ 431 մլն և 1,4 մլրդ, 2017 թ.՝ 440 մլն և 1,5 մլրդ, 2018 թ.՝ 518 մլն և 1,6 մլրդ (առավել մանրամասն տե՛ս Trends In World Military Expenditure, 2016, <https://www.sipri.org/sites/default/files/Trends-world-military-expenditure-2016.pdf> և «SIPRI-ն ադրբեջանական քարոզչության ակամա գործիք», <https://www.panorama.am/am/news/2017/10/24/SIPRI-ադրբեջանական-քարոզ/1854947>):

<sup>27</sup> Տե՛ս «Глава Генштаба РФ: Россия выступает за мирное урегулирование нагорно-карабахского конфликта», <https://news.gisher.ru/ru/politics/glava-genshtaba-rf-russia-vystupaet-za-mirnoe-uregulirovanie-nagorno-karabaxskogo-konflikta.html>

<sup>28</sup> ՌԴ-ն ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ միակ երկիրն է, որ զենք է վաճառում ԼՂ հակամարտության կողմերին:

նափակող պարտավորություն չունի: Ավելին՝ ՀԱՊԿ-ից դուրս նման սահմանափակումներ նույնպես չկան, բացառությամբ այն երկրների, որտեղ օրենսդրորեն արգելված է ԼՂ հակամարտության մեջ ներգրավված կողմերին զինտեխնիկա վաճառել:

Տրամաբանական է, որ ՌԴ - Ադրբեջան ռազմատեխնիկական գործակցությունը հանրային հարթակներում պետք է ընկալվի քննադատաբար ու քաղաքական խանդով: Ըստ «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի» 2013, 2015, 2017 թվականներին անցկացրած «Կովկասյան բարոմետր» ՀԿ հարցումների՝ հայաստանաբնակ քաղաքացիների համապատասխանաբար 84 %, 74 %, 64 %-ը ՌԴ-ին համարում են ՀՀ-ի բարեկամ երկիր: Թեև ներկայացված տվյալներում տեսանելի է վստահության նվազող դինամիկա, սակայն փաստենք, որ ՌԴ-ն ոչ միայն բացարձակ առաջատար է «բարեկամ երկրների ցանկում», այլև երկրորդ տեղում գտնվող Ֆրանսիային գերազանցում է մի քանի անգամ. վերջինիս վստահում են հարցվածների համապատասխանաբար 7 %, 11 %, 17 %-ը<sup>29</sup>:

ՀԱՊԿ անդամ երկրների ազգային շահերի ձևավորման ու մեկտեղման կարևոր բնութագրիչներ են նրանց քաղաքակրթական ընկալումներն ու արժեքաբանության ընդհանրությունը, «վտանգի» ու «անվտանգության» պատկերացումները, զարգացման տեսլականների ուրվագծումը: Քաղաքական իրականության մեջ դրանք արտացոլվում են պետությունների, այդ թվում ՀԱՊԿ անդամ երկրների՝ միջազգային տարբեր կազմակերպություններին անդամակցելու նախապատվություններում, այդ կառույցներում նրանց որդեգրած մոտեցումներում, քվեարկություններում: Շեշտենք, որ այդ ցուցիչները մենք դիտարկում ու վերլուծում ենք դրանք կրող պետությունների դաշնակցային պարտավորություններին և մասնավորապես համաձայնեցված քաղաքականություն մշակելու հանձնառությանը համապատասխանելու տեսանկյունից: Օրինակ՝ ՀԱՊԿ ձևաչափում ՀՀ-ի դաշնակից համարվող երկրներ Ղազախստանը, Տաջիկստանը, Ղրղզստանը միաժամանակ «Իսլամական համագործակցության կազմակերպության» անդամներ են: Մա դավանաբանական հիմքով ստեղծված միջազգային կազմակերպություն է, որն իր անդամների շահերի ու նպատակների բավարարման խնդիր ունի՝ հիմք ընդունելով կրոնական ընդհանրության, արժեքաբանական պատկանելության ելակետային դրույթները: Նշենք, որ Ադրբեջանը այս հարթակը պարբերաբար օգտագործում է ԼՂ խնդրի վերաբերյալ միակողմանի որոշումներ անցկացնելու համար՝ փորձելով ԼՂ «ինքնորոշման իրավունքը» ներկայացնել որպես դավա-

<sup>29</sup> Տե՛ս Հարավկովկասյան երկրներում քաղաքական, սոցիալական և տնտեսական զարգացումների հանրային ընկալումը (2017թ. նոյեմբերի դրությամբ), 19 դեկտեմբեր, 2017 թ., Եր. [http://www.circ.am/hosting/file/\\_static\\_content/barometer/2017/CB2017\\_ARM\\_presentation\\_final.pdf](http://www.circ.am/hosting/file/_static_content/barometer/2017/CB2017_ARM_presentation_final.pdf)

նաբանական հակամարտություն: Մյուս կողմից՝ նման կազմակերպությունների ձևաչափում և նրանց միջոցով պաշտոնական Բաքուն քարոզչական ակտիվ աշխատանք է տանում այսպես կոչված «Խոջալուի ցեղասպանության»<sup>30</sup>, «ՀՀ-ի կողմից Ադրբեջանի հողերի բռնազավթման»<sup>31</sup> կեղծ թեզերի վերաբերյալ ընդհանուր մոտեցումներ մշակելու, միջազգային քաղաքական ու մշակութային տարբեր հարթակներում ու կազմակերպություններում քվեարկությունների ժամանակ միացյալ դիրքորոշմամբ հանդես գալու համար: Այս հարցում Բաքվին բավական գործուն աջակցություն են ցուցաբերում Թուրքիան, Պակիստանը, Սաուդյան Արաբիան: Մինչդեռ ՀՀ-ն այս հարթակում չունի ադրբեջանական մոտեցումներին հակադարձելու վստահելի գործընկերներ<sup>32</sup>:

ՀԱՊԿ անդամ երկրների փոխադարձ պարտավորություններից է միջազգային հարթակներում դիրքորոշումների համապատասխանեցումը, ինչն արտացոլվում է տարբեր կազմակերպություններում քվեարկությունների տեսքով: Նկատելի է, որ նման կարևորագույն հարցում դեռևս բավարար չէ կազմակերպության անդամների անհրաժեշտ խորության գործակցությունը և մոտեցումների համապատասխանեցումը: Դրա վառ օրինակ է ՄԱԿ-ում 2010, 2011, 2012 թվականներին Վրաստանի նախաձեռնությամբ քվեարկության դրված և ՌԴ-ի շահերին հակասող «Status of internally displaced persons and refugees from Abkhazia, Georgia and the Tskhinvali region/South Ossetia, Georgia» բանաձևի քվեարկության պատկերը<sup>33</sup>:

<sup>30</sup> Խոջալուի «ցեղասպանությանը» նվիրված հանդիպման ժամանակ կազմակերպության ղեկավարը նշեց, որ դա «ՀՀ-ի կողմից Ադրբեջանի հողերի անօրեն գրավման արդյունք է» (առավել մանրամասն տե՛ս «OIC Secretary General commemorates Khojaly Massacre». <https://www.oic-oci.org/topic/?tid=13169&ref=5769&lan=en>):

<sup>31</sup> Վերահաստատում է իր ընդունած նախորդ բանաձևերը, որոնք վերաբերում են ՀՀ-ի կողմից Ադրբեջանի հողերի գրավմանը և իր աշխատանքային խմբի շրջանակներում քննարկումներ է անցկացնում առկա իրավիճակի վերաբերյալ (այս մասին առավել մանրամասն տե՛ս «OIC Contact Groups on Palestine, Jammu And Kashmir, Sierra Leone and the Aggression of Armenia against Azerbaijan meet on the Sideline of the ACM in New York», [https://www.oic-oci.org/topic/?t\\_id=11570&ref=4538&lan=en](https://www.oic-oci.org/topic/?t_id=11570&ref=4538&lan=en)):

<sup>32</sup> Ղազախստանը, Ղրղզստանը, ինչպես նաև Ադրբեջանը և Թուրքիան «Թուրքախոս երկրների համագործակցության խորհուրդ» կազմակերպության անդամներ են, որի հռչակած նպատակներում կարևոր տեղ է գրավում թուրքախոս երկրների միջև փոխադարձ վստահության ամրապնդումն ու քաղաքական համախմբումը, որի իրականացման գործիքներ են դիտարկվում տնտեսական ու տեխնիկական շփումների ակտիվացումը, մարդկային ներուժի գործարկումը, մշակութային ժառանգության վերականգնումն ու զարգացումը (այս մասին առավել մանրամասն տե՛ս «The Cooperation Council Of Turkic Speaking States», <http://www.mfa.gov.tr/turk-konseyi-en.en.mfa>):

<sup>33</sup> Տե՛ս «Status of internally displaced persons and refugees from Abkhazia, Georgia and the Tskhinvali region/ South Ossetia, Georgia», [https://search.un.org/results.php?ic=utf8&output=xml no dtd&oe=utf8&Submit= Search& ga=GA1.2.525308454.1516877541& gid=GA1.2.1713688206.1519017728& \\_utma=114554307.525308454.1516877541.1519065064.1519065064.1& \\_utmz=114554307& \\_utmz=114554307.1519065064.1.1.utmcsr%3Dgoogle%7Cutmccn%3D%28organic%29%7Cutmcmd%3Dorganic%7Cutmctr%3D%28not+provided%29& \\_utmt=1& \\_utmb=114554307.10.1519065064& \\_gat=1&query=14+countries+voted+against+the+UN+resolution+on+refugees+from+Abkhazia+and+South+Ossetia&tpl=un&lang=en&rows=10](https://search.un.org/results.php?ic=utf8&output=xml no dtd&oe=utf8&Submit= Search& ga=GA1.2.525308454.1516877541& gid=GA1.2.1713688206.1519017728& _utma=114554307.525308454.1516877541.1519065064.1519065064.1& _utmz=114554307& _utmz=114554307.1519065064.1.1.utmcsr%3Dgoogle%7Cutmccn%3D%28organic%29%7Cutmcmd%3Dorganic%7Cutmctr%3D%28not+provided%29& _utmt=1& _utmb=114554307.10.1519065064& _gat=1&query=14+countries+voted+against+the+UN+resolution+on+refugees+from+Abkhazia+and+South+Ossetia&tpl=un&lang=en&rows=10)

<i>Պետություն</i>	<i>2010թ. Քվեարկության պատկեր</i>	<i>2011թ. Քվեարկության պատկեր</i>	<i>2012թ. Քվեարկության պատկեր</i>
<i>Հայաստան</i>	<i>դեմ</i>	<i>դեմ</i>	<i>դեմ</i>
<i>Բելառուս</i>	<i>ձեռնպահ</i>	<i>չի մասնակցել</i>	<i>չի մասնակցել</i>
<i>Ղազախստան</i>	<i>ձեռնպահ</i>	<i>ձեռնպահ</i>	<i>ձեռնպահ</i>
<i>Ղրղզստան</i>	<i>ձեռնպահ</i>	<i>ձեռնպահ</i>	<i>ձեռնպահ</i>
<i>ՌԴ</i>	<i>դեմ</i>	<i>դեմ</i>	<i>դեմ</i>
<i>Տաջիկստան</i>	<i>չի մասնակցել</i>	<i>ձեռնպահ</i>	<i>ձեռնպահ</i>
<i>Ուզբեկստան</i>	<i>չի մասնակցել</i>	<i>չի մասնակցել</i>	<i>չի մասնակցել</i>

Ինչպես տեսնում ենք, միակ երկիրը, բացի ՌԴ-ից, որ դեմ է քվեարկել ներկայացվող բանաձևին, ՀՀ-ն է: Սա փաստում է, որ ընդհանուր դիրքորոշումների մշակման ու իրացման օրակարգը ՀԱՊԿ երկրների համար խիստ արդիական է մնում:

Ամփոփելով կարելի է եզրակացնել.

- Հայեցակարգային ու հոչակագրային առումով ՀԱՊԿ-ն հավաքական անվտանգության համակարգ է, որի գործունեությունը հիմնված է «հավաքական ինքնապաշտպանության» ու «անվտանգության» սկզբունքների վրա: Իրավական առումով լինելով ռազմաքաղաքական դաշինք՝ ՀԱՊԿ-ն, սակայն, ունի արարողակարգային ու ներքին կանոնադրային այնպիսի նորմեր, որոնցով էապես տարբերվում է ժամանակակից աշխարհում հավաքական անվտանգության ամենից գործուն համակարգից՝ ՆԱՏՕ-ից:

- Չնայած ՀԱՊԿ-ի ռազմաքաղաքական բաղադրիչների առանցքային դերակատարմանը, այնուամենայնիվ իրական քաղաքականության մեջ դաշինքների գործունեության անվտանգային բաղադրիչը անմիջական ու սուսնձող կապ է պետությունների՝ տնտեսական ու ֆինանսական ընդհանուր շահեր ունենալու առաջնահերթության միջև: Առանց ընդհանուր տնտեսական շահի գիտակցման՝ քաղաքական ու անվտանգային գործակցությունը սովորաբար թերի, խնդրահարույց է: Զարգացած ապրանքաշրջանառությունը, ակտիվ տնտեսական շփումներն առանցքային այն գործոններն են, որոնք մի կողմից ամրապնդում են կայացող, տարբեր աշխարհընկալում ունեցող և զարգացման տարբեր մակարդակներում գտնվող երկրների դաշինքները, մյուս կողմից պայմաններ ստեղծում, որ դրանք առավել կենսունակ լինեն՝ ունենալով հստակ ուրվագծելի ու փոխշահավետ զարգացման հեռանկարներ:

- Առաջնորդվելով դաշինքների համար ելակետային հավաքական անվտանգության դրույթով և փոխադարձ ռազմական օգնություն ցուցաբերելու պարտավորությամբ՝ դաշինքների (ՀԱՊԿ) անդամները, չնայած սահմանափակող ներքին նորմերի բացակայությանը, այնուամենայնիվ, ելնելով քաղաքական և դաշնակցային ոգու իրողություններ-

րից, երրորդ երկրների հետ ռազմատեխնիկական գործակցություն ծավալելու իրենց հնարավորություններն առաջին հերթին պետք է համաձայնեցնեն դաշինքի անդամ երկրների հետ և միայն այդ համատեքստում կայացնեն առավել հավասարակշռված որոշում:

- Հավաքական անվտանգության դրույթների արդյունավետության ու կենսունակության առաջնային ցուցանիշը անդամ երկրների ազգային շահերի համադրելի մոտեցումներն են և դրանց հիմքով քաղաքական համակարգված վարքի դրսևորումը միջազգային կազմակերպությունների հարթակներում:

**Բանալի բառեր** – ՀԱՊԿ, ՀՀ ազգային շահեր, անվտանգություն, ՌԴ, հավաքական անվտանգության համակարգ, ռազմական գործակցություն, Բելառուս, Ղազախստան, Ադրբեյջան

**АЛЕН ГЕВОНДЯН – Организация Договора о коллективной безопасности и современные вызовы безопасности РА.** – Статья посвящена роли и значению ОДКБ в обеспечении безопасности нашей страны. Проанализированы некоторые пункты Концепции коллективной безопасности, а также темпы сотрудничества стран-членов ОДКБ с Арменией и Азербайджаном. Сравняются в частности темпы сотрудничества в экономике, внешней торговле, военно-технической сфере. Выражено мнение, что недостаточная институциональная эффективность организации обусловлена разными интересами её членов, что препятствует скоординированным внешнеполитическим подходам в рамках ОДКБ.

**Ключевые слова:** ОДКБ, национальные интересы РА, безопасность, Российская Федерация, система коллективной безопасности, военное сотрудничество, Беларусь, Казахстан, Азербайджан

**ALEN GHEVONDYAN – Collective Security Treaty Organization and the Current Security Challenges of the Republic of Armenia.** – This article is about the role of CSTO in assuring the security of RA. It analyzes the current comprehensive security strategy of the CSTO. This article also analyzes and assesses the economic and political-military relations of the CSTO member countries with RA and Azerbaijan. In addition, it highlights the new challenges of the CSTO development as such. There is an assumption in the article that the impediments for the institutional effectiveness of the organization are related to the different interests of some member states. They hinder the effective development of common security policy and coordinated foreign policy approaches in frames of CSTO.

**Key words:** CSTO, Armenian national interests, security, Russian Federation, collective security system, military cooperation, Belarus, Kazakhstan, Azerbaijan